# «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**(5-րդ դասարան)**

ԱՐԵՎԻԿ
2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԱՌԱՋԱԲԱՆ** ........................................................................................ 3

**ԹԵՄԱ 1.** Երաժշտության և արվեստի մյուս տեսակների փոխառնչությունները: Գեղարվեստական կերպար .... 5

**ԹԵՄԱ 1.1.** Երաժշտություն և գրականություն ................................ 5

**ԹԵՄԱ 1.2.** Երաժշտություն և կերպարվեստ ................................... 10

**ԹԵՄԱ 1.3.** Երաժշտություն և պարարվեստ .................................... 12

**ԹԵՄԱ 2.** Երաժշտությունը թատրոնում, կինոյում և լրատվա-միջոցներում ........................................................................ 21

**ԹԵՄԱ 2.1.** Երաժշտություն և թատրոն ............................................ 21

**ԹԵՄԱ 2.2.** Երաժշտություն և կինոարվեստ ................................... 22

**Թեմա 2.3.** Երաժշտությունը լրատվամիջոցներում ...................... 23

Երաժշտության ուսուցման մեթոդները ............................................ 27

5-րդ դասարանի թեմատիկ պլան ..................................................... 39

Գնահատման համակարգ .................................................................. 49

**Հավելված** ............................................................................................ 57

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** ........................................ 91

# ԱՌԱՋԱԲԱՆ

Տարրական դպրոցում աշակերտները ձեռք են բերել բավականաչափ գիտելիքներ երաժշտության պարզ ձևերի (երգ, պար, քայլերգ), երաժշտաթատերական ժանրերի, երաժշտական այբուբենի, արտահայտչական միջոցների և կարևորագույն այլ թեմաների վերաբերյալ, որոնք հնարավորություն են տալիս հիմնական դպրոց անցնել բավականաչափ պատրաստված՝ շարունակելու իրենց երթը երաժշտական աշխարհում:

Հիմնական դպրոցում «Երաժշտություն» առարկայի դասերին ծանոթանում են այնպիսի նոր հասկացությունների, որոնց շնորհիվ սովորողները կարողանում են հաղորդակցվել և ինքնաարտահայտվել: Երաժշտական գործունեությունն իրականանում է տարրական դպրոցում ձեռք բերված երաժշտատեսական և երաժշտապատմական գիտելիքների հիման վրա: Գործունեության տեսակներն են՝ երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, ստեղծագործական աշխատանք, նվագ մանկական նվագարաններով:

Հիմնական դպրոցում սովորողները գիտակցում և արժևորում են հայ ազգային երաժշտության տեղն ու դերը իրենց (ու նաև յուրաքանչյուր հայի) կյանքում՝ որպես դրա կրող, պահպանող և սերունդներին փոխանցող, ինչպես նաև հաղորդակից դառնում համաշխարհային երաժշտարվեստի հայտնի ստեղծագործություններին: Կարևորելով երաժշտության դերը մարդու կյանքում՝ սովորողները կազմակերպում են ընտանեկան և դպրոցական համերգներ, համայնքային մշակութային միջոցառումներ կամ դառնում այդ համերգների ունկնդիրը:

Հիմնական դպրոցի՝ ՀՊՉ-ով սահմանված պահանջներից է նաև նախագծային ուսուցումը՝ որպես նորագույն տեխնոլոգիա: Նախագծա-

յին ուսուցում կազմակերպելու համար աշակերտները, 5-րդ դասարանից սկսած, իրականացնում են հետազոտական աշխատանքներ՝ պատրաստելով տեսաասահիկ կոմպոզիտորների ստեղծագործական ուղու մասին:

5-րդ դասարանի դասագիրքն ընդգրկում է երաժշտության կապը արվեստի մի քանի տեսակների հետ՝ գրականություն, կերպարվեստ, պարարվեստ, թատրոն, կինոարվեստ, հեռուստատեսություն, ինչպես նաև դրանց փոխառնչությունների արդյունքում ստեղծված ժանրերի ուսումնասիրումը: Դրան նպաստում է **երաժշտական** և **գրական կերպարների**, **երաժշտական** և **կերպարվեստի կերպարների**, **երաժշտական** և **պարային կերպարների** բացահայտումն ու ուսումնասիրումը:

5-րդ դասարանի ծրագիրն ուսումնասիրելու համար հատկացվում է 34 ժամ: Ծրագիրը բաղկացած է երկու թեմայից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթաթեմաների:

Դասագրքում աշխատանքը հեշտացնելու նպատակով օգտագործվել են պայմանական հետևյալ նշանները.

 Երգի՛ր

 Պարի՛ր

 Ունկնդրի՛ր

 Նվագի՛ր

 Պատրաստի՛ր տեսաասահիկ

 Նկարի՛ր

 Նոտագրի՛ր

 Խաղ

 Հարցեր

 Հետաքրքիր է իմանալ

## ԹԵՄԱ 1. Երաժշտության և արվեստի մյուս տեսակների փոխառնչությունները: Գեղարվեստական կերպար

Արվեստը գեղարվեստորեն արտացոլում է իրականությունը, ծառայում մարդկանց հաղորդակցմանը: Արվեստը մարդու ներաշխարհի արտացոլումն է, բայց նաև այն «հայելին» է, որում արտացոլվում են ժողովուրդների պատմությունը, ավանդույթները, սովորույթները, կենցաղը, հույզերն ու զգացումները ուրախության ու տխրության պահերին:

Արվեստի տեսակներից յուրաքանչյուրն ունի իր լեզուն, իրեն բնորոշ արտահայտչամիջոցները, որոնցով պատկերում է աշխարհը:

Արվեստի տեսակները բազմաթիվ կապերով կապված են միմյանց հետ: Այդ փոխազդեցությունները հարստացնում են արվեստի տեսակները ու ծնունդ տալիս նոր ստեղծագործությունների: Այդ կապերն այնքան խորն են, որ արվեստի տարբեր տեսակների միահյուսումով առաջ են եկել արվեստի նոր, ինքնուրույն տեսակներ, ինչպիսիք են թատրոնը, կինոարվեստը, կրկեսը և այլն, և մի շարք ժանրեր՝ օպերա, բալետ և այլն:

Այս թեմայում հատուկ ուշադրություն է հատկացված արվեստի մի քանի տեսակների միջազգային օրերին: Այդ ամսաթվերը սահմանել է ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ դրանք կապելով արվեստի որևէ գործչի կամ հատուկ իրադարձության հետ: Իսկ Նկարիչների միջազգային օրը սահմանել է «Աշխարհի ժողովուրդների արվեստը» միջազգային կազմակերպությունը[1]:

## ԹԵՄԱ 1.1. Երաժշտություն և գրականություն

«Երաժշտություն և գրականություն» ենթաթեմայում սովորողներն ուսումնասիրում են **երաժշտությունը** և **գրականությունը** որպես արվեստի տեսակներ, ինչպես նաև այս երկու տեսակների փոխկապակցվածությունից ստեղծված ժանրերը՝ երգ, ռոմանս, խմբերգ, կանտատ: Ներկայացված են այն կոմպոզիտորները, որոնք մեծ ներդրում են ունեցել տվյալ ժանրի ստեղծման և զարգացման մեջ: Սովորողներն ուսումնասիրում են այդ ժանրերի պատմական ակունքներն ու զարգացումը հայ և համաշխարհային երաժշտության մեջ:

---

[1] https://www.calend.ru/holidays/

Աշակերտները սովորում են Գեղարիկի «Աշուն»[2] երգը և նոտագրում հայկական ժողովրդական «Լճ, լճ, լճ, լճ, ձին փախել է» երգը՝ վերհիշելով 4/4 չափը:

Երաժշտության և գրականության փոխկապակցվածությունից է ծըն-վում **ծրագրային** երաժշտությունը: Ծրագրային երաժշտություն գրելիս կոմպոզիտորները ծրագիրն արտահայտում են վերնագրում: Որպես օրի-նակ՝ սովորողների ուշադրությանն ենք ներկայացնում ռուս կոմպոզի-տոր Պյոտր Չայկովսկու «Տարվա եղանակներ» դաշնամուրային շարքը, որը կոմպոզիտորն անվանել է ամիսների անուններով՝ որպես բնաբան օգտագործելով ռուս բանաստեղծների տեքստերը: Դասագրքում ներ-կայացված «Սեպտեմբեր (Որս)» մանրանվագի բնաբանն է Ալեքսանդր Պուշկինի «Որս» բանաստեղծությունը:

Пора, пора! рога трубят;
Псари в охотничьих уборах
Чем свет уж на конях сидят,
Борзые прыгают на сворах.

Դասագրքում հղումով ներկայացված է նաև **ոչ ծրագրային** երա-ժըշտությունը:

Արմենուհի Կարապետյանի «Ձոն դպրոցին»[3] երգը գրված է Հրաչյա Մաթևոսյանի խոսքերով: Այստեղ հանդիպում ենք «ջինջ կոմիտասյան» և «վառ սարյանական» բառակապակցություններին, որոնցով հեղինակը ցանկացել է շեշտել Մեծն Կոմիտասի մաքուր, ջինջ մեղեդին, որը կարե-լի է համեմատել քարերի միջից հոսող մաքուր ջրի հետ, և հայ մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի նախընտրած վառ գունային երանգները:

**Խմբերգը**՝ որպես բազմաձայն փոքրածավալ ստեղծագործություն, մեծ տեղ ունի հայ մի շարք կոմպոզիտորների արվեստում: Սովորողներին ներկայացվում է Քրիստափոր Կարա-Մուրզայի ստեղծագործական դի-մանկարը՝ որպես բազմաձայն երգեցողության հիմնադիր հայ երաժըշ-տության մեջ:

---

[2] **Աշուն**, Վոկալ-մանկավարժական երկացանկ հայ կոմպոզիտորների ստեղ-ծագործություններից, կազմող՝ Թ. Շահնազարյան, Երևան, Մինիստրության գի-տա-մեթոդական կաբինետի հրատարակչական խումբ, 1968:

[3] **Ձոն դպրոցին**, Կարապետյան Ա., Մանկական խմբերգեր, Երևան, «Պրին-տոգրաֆ» հրատ., 2022:

Աշակերտներն ունկնդրում են «Լեպհո՛, լե՛, լե՛»[4] խմբերգը քառաձայն՝ մշակումը՝ Կարա-Մուրզայի, իսկ որպես երգի ուսուցում՝ ներկայացված է երկձայն տարբերակը: Երգը սովորելուց հետո առաջադրանք է տրվում մանկական նվագարաններով (դափ, դհոլ) հանպատրաստից նվագակցել:

Ստորև ներկայացված է ռիթմական նվագակցության օրինակ.

## Լեպհո՛, լե՛, լե՛

Հայկ. ժող. երգ
Մշ.՝ Ք. Կարա-Մուրզայի




Ելնենք սարը, բռնենք պարը, լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛,
Բացվի օրը, մտնենք ձորը, լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛:
Հոդալլո՛ ջան, հոդալլո՛ ջան, հոդալլո՛, 2 անգամ
Աչեր սիրուն, դարալլո՛ ջան, դարալլո՛: 2 անգամ

[4] **Լեպհո՛, լե՛, լե՛**, Կարա-Մուրզա Քր., Խմբերգեր, Երևան, «Հայաստան» հրատ., 1978:

*Մեթոդական ուղղորդումներ.* երգը լիարժեք յուրացնելուց հետո սովորել կատարել մանկական նվագարանների՝ դափի և դհոլի նվագակցությամբ: Առաջին մասում «լեպհո՛» բառի հետ դափը թափահարել և հարվածել դհոլին, իսկ «լճ, լճ» բառերի հետ դափով հարվածել երկու անգամ, իսկ դհոլով՝ մեկ անգամ: Երկրորդ մասում «հողալը՛ ջան» բառերի հետ երկու անգամ հարվածել դափին:

**Ռոմանսը** երաժշտական ժանր է ձայնի համար՝ նվագարանի ուղեկցությամբ: Իր ծագումով և «ռոմանս» անվանմամբ այն ներկայացված է որպես քնարական, մարդու ներաշխարհը, զգացմունքներն ու ապրումները նկարագրող փոքրածավալ ստեղծագործություն: Աշակերտներն ուսումնասիրում են հայ դասական ռոմանսի հիմնադիր Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործական ուղին և սովորում «Վարդը» ռոմանսը: Ստորև ներկայացված է «Հեղինակ և կերպար» խաղի[5] բացատրությունը, որը պետք է խաղալ «Վարդը» սովորելուց հետո:

**«Հեղինակ և կերպար»:** Այս խաղը հիմնված է դերային նույնականացման մեթոդի վրա: Երաժշտական ստեղծագործության կերպարի նույնականացումը տեղի է ունենում հնչերանգի և գեղարվեստական ասոցիացիաների վերլուծության միջոցով: Հիմնվելով այս վերլուծության վրա՝ աշակերտն առաջին դեմքից՝ «հերոսի» անունից, պատմում է իր մասին, իր մտքերի, զգացմունքների, զգացողությունների մասին: Այս խաղը ենթադրում է բնութագրվող կերպարի կամ երևույթի խորհրդանիշ հանդիսացող առարկայի առկայություն՝ հագուստի մի մաս կամ որևէ իր: Բացի առարկաներից՝ կերպարների նույնականացումը պահանջում է նաև արտահայտվել, շարժվել կերպարին համապատասխան: Երբ սովորողը հանդես է գալիս հեղինակի տեսանկյունից, նա պետք է պատմի այն մտահղացման մասին, որը պատճառ է հանդիսացել ստեղծելու տվյալ ստեղծագործությունը:

Ռոմանոս Մելիքյանի «Վարդը»[6] ռոմանսն իր մեջ ներառում է հեղինակի խոսք, տղայի և վարդի երկխոսություն: Տվյալ դեպքում հեղինակի մտահղացումը գերմանացի մեծ գրող Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթեինն

[5] **Геворкян А. М.**, Формирование слушательской компетенции бакалавров в процессе музыкально-педагогического образования: дисс. канд. пед. наук по ВАК РФ 13.00.02.– Тамбов: 2009.

[6] **Վարդը**, Հայկական ռոմանսներ, կազմող՝ Հ. Մելիքյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1984:

է, քանի որ ռոմանսի հիմքում նրա բանաստեղծությունն է՝ Հովհաննես Թումանյանի չքնաղ թարգմանությամբ: Տղայի և վարդի կերպարները նույնպես ստեղծել է Գյոթեն, այսինքն՝ աշակերտները նույնականացնելու են գերմանացի գրողի ստեղծած հերոսներին, իսկ Ռոմանոս Մելիքյանը երաժշտությամբ, երաժշտական արտահայտչամիջոցներով կարծես «լրացրել է» հեղինակի, տղայի և վարդի բնութագրումը:

**Կանտատը** ներկայացվում է որպես վոկալ-նվագարանային մեծածավալ ստեղծագործություն՝ աշխարհիկ և հոգևոր տեսակներով: Այս ժանրն իր զարգացումն է ունեցել գերմանացի հանճարեղ կոմպոզիտոր Յոհան Սեբաստիան Բախի ստեղծագործություններում. նա ստեղծել է շուրջ 250 կանտատ: Սովորողներին ներկայացվում է կատակային «Սուրճի կանտատը»: Հատկանշական է, որ աշակերտներն ունկնդրում են «Ես ոչ մի բանի հետ չեմ փոխի սուրճը» մեներգը, որում անընդհատ կրկնվում է՝ սուրճ, սուրճ:

Սովորողներին ներկայացվում է նաև Յոհան Սեբաստիան Բախի ստեղծագործական դիմանկարը: Անդրադարձ է կատարվում հայ երաժշտության մեջ կանտատ ժանրի ձևավորմանն ու զարգացմանը:

«Երաժշտություն և գրականություն» ենթաթեման ամփոփվում է Կոմիտասի «Ո՛վ մեծասքանչ դու լեզու»[7] երգով:

Յուրաքանչյուր ենթաթեմայի ավարտին որպես ամփոփում ներկայացվում է «Կլոր սեղան» խաղը[8]:

**«Կլոր սեղան»:** Ուսուցիչը նախապես պատրաստում է տվյալ թեմայի վերաբերյալ դիդակտիկ նյութեր՝ կոմպոզիտորների դիմանկարներ, գեղանկարներ, երգերի հեղինակների անվանումներով պաստառներ:

**Խաղի ընթացք:** Աշակերտներն ունկնդրում են իրենց ծանոթ ստեղծագործությունները, որի ընթացքում ուսուցիչը ցուցադրում է գեղանկարներ, որոնք այդքան էլ չեն համընկնում ունկնդրվող երաժշտության բովանդակության հետ: Աշակերտները հերթականությամբ իրենց կարծիքն են հայտնում: Ապա ուսուցիչը հարցեր է տալիս տվյալ թեմայում ընդգրկված կոմպոզիտորների ստեղծագործական ուղու վերաբերյալ,

---

7 **Ո՛վ հիասքանչ դու լեզու**, Լուսինյան Ա., Երաժշտություն (ուսումնաօժանդակ ձեռնարկ), Երևան, «Աստղիկ գրատուն» հրատ., 2012:

8 **Геворкян А.М.** Формирование слушательской компетенции бакалавров в процессе музыкально-педагогического образования: дисс. канд. пед. наук по ВАК РФ 13.00.02.– Тамбов: 2009.

բայց ցույց է տալիս այլ կոմպոզիտորների դիմանկարներ: Սովորողները պետք է կռահեն, թե ում մասին են հարցերը և ում դիմանկարն է: Ապա ուսուցիչը ցույց է տալիս պաստառներ, որոնց վրա գրված են տվյալ թեմայում ներառված երգերի հեղինակների անունները: Ունկնդրելով այդ երգը՝ ուսուցիչը ցուցադրում է երգին ոչ համապատասխան պաստառներ, իսկ սովորողները կռահում, թե որ երգն է հնչում և որ երգի հեղինակներն են ներկայացված պաստառի վրա:

**Խաղի օրինակ.**

«Երաժշտություն և գրականություն» թեմայի ավարտին ուսուցչի մոտ պետք է լինեն Ք. Կարա-Մուրզայի, Ռ. Մելիքյանի և Յ.Ս. Բախի դիմանկարները, որպես երգի ուսուցում ներկայացված երգերի հեղինակիների անուններով պաստառներ: Օրինակ՝

Խոսք՝ Հ. Հայրապետյանի
Երաժշտ.՝ Գեղարիկի

Խոսք՝ Ն. Մեզպուրյանի
Երաժշտ.՝ Կոմիտասի

Գեղանկարները պետք է լինեն տվյալ թեմային համապատասխան: Օրինակ՝ Մարտիրոս Սարյան՝ «Աշունը սարերում», Պոլ դե Լոնգպրե՝ «Վարդեր և մեղուներ», Ֆեդոտ Սիչկով՝ «Առավոտյան սուրճ» և այլն:

**Մեթոդական ուղղորդումներ:** Այս խաղը թույլ է տալիս լսել յուրաքանչյուր մասնակցի կարծիքը: Խաղը կարելի է խաղալ նաև թիմերով: Անձանոթ ստեղծագործություններ ունկնդրելու ժամանակ խաղի վերջում ուսուցիչն էլ է արտահայտում իր կարծիքը՝ բացահայտելով ստեղծագործության մտահղացումը:

«Կլոր սեղան» խաղը կարելի է խաղալ նաև ունկնդրելով իրենց անծանոթ ստեղծագործություններ:







## ԹԵՄԱ 1.2. Երաժշտություն և կերպարվեստ

**Կերպարվեստը** սովորողներին է ներկայացվում անգլիական ավանդական «The rainbow song»[9] երգը ծիածանի գույների մասին:

Դասագրքում կերպարվեստի և երաժշտության փոխկապակցվածությունը ներկայացվում է գեղանկարչական ժանրերի միջոցով, որոնք կարելի է «տեսնել» նաև երաժշտության մեջ:

**Դիմանկարի ժանրը** ներկայացվում է գերմանացի կոմպոզիտոր Ռոբերտ Շումանի «Դիմակահանդես» դաշնամուրային մանրանվագների շարքով, որում դիմակով Շումանն իրեն ներկայացնում է կոմպոզիտորներ Նիկոլո Պագանինիի և Ֆրեդերիկ Շոպենի կողքին:

Հայ երաժշտության մեջ դիմանկարը «տեսնում ենք» Էդվարդ Միրզոյանի արվեստում՝ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Շուշանիկ» քնարական պատկերում և իր թոռնուհուն նվիրված «Մարիամ» դաշնամուրային մանրանվագում:

**Բնանկարի ժանրն** արտացոլված է Արեգ Լուսինյանի «Ուրախ առավոտ»[10] երգում և Էդվարդ Գրիգի «Պեր Գյունտ» սյուիտի[11] 1-ին մասում, որը վերնագրված է «Առավոտ»: Է. Գրիգը սյուիտը գրել է նորվեգացի դրամատուրգ Հենրիկ Իբսենի «Պեր Գյունտ» դրամայի համար: Պեր Գյունտը մի պատանի է, որն արկածներով լի կյանքով է ապրում, սակայն վերադառնում է հայրենի տուն. «Առավոտ» հատվածում պատկերված է նորվեգական աշխարհի գեղեցկությունը՝ Պեր Գյունտի հայրենի երկրի բնությունը:

Բնանկարի ժանրը կարող ենք «տեսնել» նաև Մելիք Մավիսակալյանի «Ջա՜ն, Հայաստան»[12] երգում, որտեղ տեսնում ենք Հայոց աշխարհի ողջ բնապատկերն իր անձայրածիր լեռներով:

---

[9] **The rainbow song**, https://itsybitsykidsmusic.com/index.php/portfolio/the-rainbow-song-sheet-music-with-chords-and-lyrics/

[10] **Ուրախ առավոտ**, Լուսինյան Ա., Այգաբացի ղողանջներ (մանկական երգերի ժողովածու), Երևան, «Լույս» հրատ., 1981:

[11] **Սյուիտը** բազմամաս սիմֆոնիկ ստեղծագործություն է՝ միավորված ընդհանուր բովանդակությամբ:

[12] **Ջա՜ն, Հայաստան**, Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների 14-րդ մրցույթ-փառատոնի պարտադիր ստեղծագործություն (Մ.Մավիսակալյանը մրցույթ-փառատոնի ժյուրիի անդամ է եղել):

**Դիցաբանական ժանրը** հանդիպում է այն արվեստագետների ստեղծագործություններում, որոնք դրանց համար որպես հիմք են վերցնում հին առասպելներն ու լեգենդները, հեքիաթներն ու ժողովրդական էպոսները:

Դիցաբանությունը ժողովուրդների հնագույն առասպելների, լեգենդների, հեքիաթների, ժողովրդական էպոսների ամբողջությունն է: Դիցաբանական սյուժեներն ու թեմաներն ընկալվում են որպես հավերժական պատմություններ ու որպես անանց գեղեցկություն՝ սնում արվեստի բոլոր տեսակները և բազմաթիվ գլուխգործոցների ստեղծման աղբյուր հանդիսանում:

Մեր ժողովրդի մշակույթում նույնպես արվեստի բազմաթիվ սքանչելի գործեր կան, որ ծնունդ են առել մեր դիցաբանությունից՝ մեր առասպելներից, վիպասքերից, մեր հոյակապ էպոսից: Հայ արվեստագետները հաճախ են պատկերել Հայկ Նահապետին, Սասունցի Դավթին, Արա Գեղեցիկին, դիցաբանական մյուս կերպարներին:

Դրա օրինակներից մեկը հայոց արքա Արա Գեղեցիկի մասին պատմող առասպելն է, որը մեզ հասել է Մովսես Խորենացու պատումով: Աշակերտներին առաջարկվում է որպես արտադասարանական աշխատանք ծանոթանալ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելի բովանդակությանը: Այն հայ գրականության մեջ տարբեր մշակումներ է ունեցել: Դրանցից մեկը՝ Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» պիեսն էլ հիմք է հանդիսացել կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» բալետի ստեղծման համար: Այս բալետում երաժշտության և կերպարվեստի փոխկապակցվածությունը վառ կերպով արտացոլված է գլխավոր հերոսներին բնութագրող գույներով: Գ. Եղիազարյանը գունային երանգներով ընդգծում է բալետի գլխավոր հերոսների կերպարներին բնորոշ գծերը: Արա Գեղեցիկ արքան բնութագրված է ոսկեգույնով, արքայական ծիրանիով, Նուարդ թագուհին՝ երկնագույնով՝ հավատարմության, անաղարտության խորհրդանիշ գույնով, Ասորեստանի թագուհի Շամիրամը՝ ալ կարմիրով՝ կրքի և արյան գույնով, քանի որ արյունարբու և արնատենչ թագուհի է, Ասորեստանի զորավար, Շամիրամի չար գործերի իրականացնող Սարգոնը՝ սև գույնով, որը չարության, նենգության ու մահվան գույնն է: Դասագրքում ներկայացված նկարներով աշակերտներին ցույց ենք տալիս այն գույները, որոնցով Գ. Եղիազարյանը բնութագրել է բալե-

տի գլխավոր գործող անձանց: Սովորողներն ունկնդրում են «Պար և Շամիրամի թագադրության տեսարան» հատվածը «Արա Գեղեցիկ և Շամիրամ» բալետից, որտեղ Շամիրամի և Սարգոնի նենգությունն ու չարությունը կոմպոզիտորը բացահայտում է երաժշտական արտահայտչամիջոցներով (սուր լարված հնչողություն, նվագարանների ձայնասահմանների հակադրում), ինչն առավել ցայտուն դրսևորվում է Շամիրամի թագադրության տեսարանում:

Կերպարվեստի՝ վերը նշված ժանրերը ներկայացնելով երաժշտության մեջ՝ սովորողները ծանոթանում են նաև այդ ստեղծագործությունների հեղինակների կենսագրությանը: Այդ կոմպոզիտորներն են Էդվարդ Միրզոյանը, Էդվարդ Գրիգը և Գրիգոր Եղիազարյանը:

«Երաժշտություն և կերպարվեստ» ենթաթեմայում հատուկ տեղ է հատկացված հայ և համաշխարհային գեղանկարիչների կտավներին. ներկայացված են Էժեն Դելակրուայի «Ֆրեդերիկ Շոպենի դիմանկարը», Վինսենթ վան Գոգի «Ցորենի դաշտն արևածագին», Եղիշե Թադևոսյանի «Արարատ», Փանոս Թերլեմեզյանի «Խուստուփի լեռը», Վարդգես Սուրենյանցի «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» կտավները:

2-րդ ենթաթեման ավարտվում է Ամանորին նվիրված անգլիական ավանդական «We wish you a Merry Christmas»[13] և Ա.Կարապետյանի «Նոր «Նոր տարի»»[14] երգերով ու «Կլոր սեղան» խաղով:

## ԹԵՄԱ 1.3. Երաժշտություն և պարարվեստ

«Երաժշտություն և պարարվեստ» ենթաթեմայում բացատրվում է երաժշտության և պարի կապը: Սովորողների ուշադրությանն է ներկայացվում Մեծն Կոմիտասի բնութագրումը պարի և շարժման վերաբերյալ: Կոմիտասը շարժումներին մեծ նշանակություն է տվել, ինչի մասին խոսել է «Պարն ու մանուկը» հոդվածում: Մանկավարժ Կոմիտասը նշում է. «Երգեցողութիւնը դնդերներու շարժում մըն է, որ կ՚առաջանայ համապատասխան զգացումներէ: Մանուկը ի՛նչ զգացումի տակ որ ըլլայ, այդ զգացումը կ՚արտայայտէ որոշ երգերով: Երգը ներքին՝ հոգեկան զգացումին արտայայտութեան մէկ ձեւն է, ուրեմն շարժում մըն է. եւ պարն ալ ինքնին շարժում մը

[13] **We wish you a Merry Christmas**, https://michaelkravchuk.com/free-lead-sheet-merry-christmas/

[14] **Նոր «Նոր տարի»**, Կարապետյան Ա., Մանկական խմբերգեր, Երևան, «Պրինտոգրաֆ» հրատ., 2022:

ըլլալով, երգը կը զուգորդուի պարին հետ: Զգացումներն ինչ ուղղութեամբ որ ընթանան, երգն ու պարն ալ նոյն արտայայտութեամբ երեւան կու գան....

Պարն ամենահիմնական նշանակութիւն ունեցող երեւոյթ մըն է. ամէն գեղարուեստ պարի մէջ կը պարփակուի: Իբրեւ շարժում՝ պարը շատ կարեւոր դեր ունի ապագայ դպրոցական կեանքի գեղարուեստական շարժումին մէջ, վասն զի պէտք է գիտնալ թէ ամէն գեղարուեստ, ինչպէս երաժշտութիւն, քանդակագործութիւն, ճարտարապետութիւն եւ այլն շարժում է. ամէն կեանքի մէջ պար կայ. արդէն ամբողջ տիեզերքի կեանքը պար չէ՞»[15]:

Արեգ Լուսինյանի «Կատակ երգ-պարը»[16] սովորելիս աշակերտները հանպատրաստից ստեղծագործում են երգին համապատասխան շարժումներ և նվագակցում դափով ու դհոլով: Կոմպոզիտորը նոտաներում նշել է ռիթմական պատկեր, որտեղ առկա է կետագծային ռիթմը, սակայն կարելի է կատարել նաև համաչափ ութերորդականներով:

«Երաժշտություն և պարարվեստ» ենթաթեման իր մեջ ներառում է հետևյալ բաժինները՝ «Ժողովրդական պար», «Դասական պար» և «Ժամանակակից պար»:

**Ժողովրդական պարը** ժողովրդի կենցաղում իր արտացոլումն է գտել պարերգի ձևով: Շուրջպարերը պարել և այսօր էլ պարում են հայկական գրեթե բոլոր ծեսերի ու արարողությունների ժամանակ: Հայկական ժողովրդական մի քանի պար մշակել է Կոմիտասը «Հայկական պարեր» դաշնամուրային պիեսներում: Այդ պարերից «Շուշիկին» սովորողներն ունկնդրել են 2-րդ դասարանում, իսկ 5-րդ դասարանում ունկնդրում են «Երանգին»: Կոմիտասի մշակումից հետո տարբեր կոմպոզիտորներ «Երանգի» պարի մեղեդին օգտագործել են իրենց ստեղծագործություններում: Որպես օրինակ՝ աշակերտներն ունկնդրում են Առնո Բաբաջանյանի «Վաղարշապատի պարը»՝ գրված դաշնամուրի համար, և Խաչատուր Ավետիսյանի «Վաղարշապատի պարը»՝ գրված հայկական ժողովրդական նվագարանների նվագախմբի համար: Ունկնդրումից հետո սովորողները նշում են «Երանգի» պարեղանակի մշակման առանձնահատկությունները երեք կոմպոզիտորների գործերում:

---

[15] **Կոմիտաս Վարդապետ**, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, երկու գրքով, Գիրք Բ, Երեւան, «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», 2007, էջ 75:

[16] **Կատակ երգ-պար**, Սարուխանյան Ս., Խաղ, երգ ու պարի աշխարհ, Երևան, «Լույս» հրատ., 1996:

Դասագրքում ներկայացված են նաև Առնո Բաբաջանյանի և Խաչատուր Ավետիսյանի ստեղծագործական դիմանկարները:

Որպես երգի ուսուցում՝ ընտրված են «Երաժշտություն և պարարվեստ» ենթաթեմային համապատասխան երգեր՝ «Եկի՛ն, եկի՛ն Մոկաց խարսներ»[17] պարերգը և Խաչատուր Ավետիսյանի «Իմ անուշ տավիղ»[18] երգը:

Ըստ ստորև նշված հատորի ծանոթագրության՝ «Եկի՛ն, եկի՛ն Մոկաց խարսներ» պարերգը «ժողովրդի մեջ տարածված է երբեմն գովաբանական, երբեմն էլ զավեշտական-ծաղրական խոսքերով»[19]:

«Ասղուտ, կուտ, կըր կուտ» երգը՝ «մանկական վիճակախաղիկ է = խաղահամրանք, համրանքախաղ»[20]: Երգի բառերի բացատրությունը.

**Ասղուտ** – փշոտ
**կրկուտ** – ցախ, չոր ճյուղեր
**զընկըռ** – կոնկրետ իմաստ չարտահայտող բնաձայնություն
**դաստա** – փունջ, կապ
**գյուլի** – կարմիր ծաղիկ,
**պուտ** – կետ

**Դասական պարը** խորեոգրաֆիայի հիմքն է, որը թույլ է տալիս ճանաչել և իմանալ բալետային արվեստի բոլոր նրբությունները: Բալետային արվեստի հիմնադիրն է ֆրանսիացի բալետմայստեր, պարուսույց, բալետային արվեստի նորարար Ժան-Ժորժ Նովերը, ում անվանում են նաև «ժամանակակից բալետի հայր»: Դասագրքում նշվում են Նովերի նորարարությունները բալետային արվեստում, որոնք էլ հիմք հանդիսացան նրան անվանելու «ժամանակակից բալետի հայր»: Մինչ Նովերը պարային հատվածներն ընդգրկված էին միայն օպերաներում կամ թատերական ներկայացումներում: Այդպիսին են եղել Ֆրանսիայի թագավորական պալատում անցկացվող հանդիսությունները, որոնցից մեկի ժամանակ

---

[17] **Մոկաց խարսներ**, Կոմիտաս, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 10, Երևան, 2000:

[18] **Իմ անուշ տավիղ**, Ավետիսյան Խ., Լիրիկական երգեր, Երևան, «Հայպետհրատ», 1964:

[19] **Կոմիտաս**, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 10, 2000:

[20] **Նույն տեղում**:

դեռ պատանի Լյուդովիկոս XIV թագավորը պարել է Ծագող արևի, իսկ ավելի ուշ՝ լույսի ու արևի աստված Ապոլոնի դերերը, ինչի արդյունքում էլ նրան անվանել են «Արև արքա»: Իսկ Նովերն ապացուցեց, որ մարդն իր մարմնի շարժումներով կարող է հանդիսատեսին փոխանցել բովանդակություն, և թատերական ներկայացումներից առանձնացրեց պարային հատվածները:

«Երաժշտություն և պարարվեստ» ենթաթեմայի շրջանակներում աշակերտներին ներկայացված է հայկական ժողովրդական «Ջա՜ն, մարա՜լ ջան»[21] պարերգը:

Որպես բալետ՝ սովորողներին է ներկայացված ռուս կոմպոզիտոր Պյոտր Չայկովսկու «Քնած գեղեցկուհին» բալետը, որի հիմքում ֆրանսիացի հեքիաթագիր Շառլ Պերոյի համանուն հեքիաթն է: Հակիրճ տրրված է բալետի լիբրետոն, որից հետո դիտում են Վալսն ու Ավրորայի և Դեզիրեի զուգապարը (*պա-դե-դե*-ն):

Այնուհետև խաղում են «Կերպարների բնութագրում» խաղը[22]:

**«Կերպարների բնութագրում»:** Այս առաջադրանքը հիմնված է արվեստի տարբեր ճյուղերի փոխկապակցվածության վրա: Աշակերտներն ունկնդրում են առաջարկվող ստեղծագործությունը և քննադատորեն բնութագրում կերպարները կոմպոզիտորի և դրամատուրգի տեսանկյունից, իսկ վերջում արտահայտում նաև իրենց կարծիքը: «Կերպարների բնութագրումը» նպատակահարմար է կիրառել երաժշտաթատերական ժանրի ստեղծագործություններ ուսումնասիրելու ընթացքում:

Սովորելով Արեգ Լուսինյանի «Քայլերգը»[23] և նոտագրելով հայկական ժողովրդական «Վիճակի երգը»՝ աշակերտներն ամրապնդում են 4/4 չափը:

Հայկական բալետային արվեստից սովորողներին ներկայացնում ենք Գրիգոր Եղիազարյանի «Սևան» բալետը, որը պատկերում է նորաստեղծ Խորհրդային Հայաստանի մարդկանց կյանքը: «Սևան» բալետից

---

[21] **Թումաճան Մ. Թ.**, Ջա՜ն, մարա՛լ ջան, Հայրենի երգ ու բան, հտ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1986:

[22] **Геворкян А. М.** Формирование слушательской компетенции бакалавров в процессе музыкально-педагогического образования: дисс. канд. пед. наук по ВАК РФ 13.00.02.– Тамбов: 2009.

[23] **Լուսինյան Ա.**, Քայլերգ, Երաժշտություն (ուսումնաօժանդակ ձեռնարկ), Երևան, «Աստղիկ գրատուն» հրատ., 2012:

ունկնդրում են «Ոսկե ձկնիկի պարը» և «Էրզրումի հարսանեկան պար» հատվածները, որոնք կոմպոզիտորի ազգային երաժշտական մտածողության վառ օրինակներ են: Հայկական բնաշխարհի գոհարներից Սևանա լիճն իր ողջ գեղեցկությամբ «բացահայտվում է» Յուրի Գևորգյանի «Սևանի լույսերը»[24] երգում և Գևորգ Բաշինջաղյանի «Առավոտը Սևանում» կտավում:

**Ժամանակակից պարի** հիմքում ազատ պարն է, որը սկիզբ է առել 20-րդ դարում: Աշակերտներին ներկայացվում են այդ պարերը: Սովորողները դիտում են ջազ-մոդեռնի, էլեկտրոդանսի, ջամփսթայլի և բրեքդանսի տեսահոլովակներ: Այնուհետև նրանք սովորում են Արթուր Գրիգորյանի «Մայրիկ»[25] երգը:

Երաժշտության և պարարվեստի փոխկապակցվածության մեջ կարող ենք հանդիպել ընդհանուր կերպարի, որը բազմիցս արտացոլվել է և՛ կոմպոզիտորների, և՛ բալետմայստերների (խորեոգրաֆների) արվեստում: Այդ կերպարը տիկնիկն է: Որպես խաղալիք՝ տիկնիկն առանձնանում է իր կտրուկ շարժումներով, ինչն էլ երաժշտության մեջ արտացոլվում է ստակկատոների կիրառմամբ: Աշակերտներն ունկնդրում են Էդվարդ Միրզոյանի «Տիկնիկների պարը»: Ունկնդրելուց հետո սովորողները երաժշտության ներքո կատարում են տիկնիկներին կամ խաղալիք զինվորիկներին համապատասխան շարժումներ: Ստորև ներկայացնում ենք տիկնիկների պարի օրինակ:

[24] **Սևանի լույսերը**, Երգի՛ր, նաիրյան իմ երկիր, կազմող և խմբագիր՝ Արամ Սաթունց, «Սովետական գրող», 1980:

[25] **Գրիգորյան Ա.**, Երգեր:– Եր.: «Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ, 2017:

# Տիկնիկների պարը

Է. Միրզոյան




10
13
8
pp
sempre
17
8
8
mp
8
21
mp
sf







*Նախապատրաստական դիրք*՝ շարքով կանգնել: Ձեռքերը պահում են առջևում՝ արմունկները դեպի կողք պահած, դաստակներն էլ տիկնիկի ձեռքերի նման պահած:

1-8-րդ տակտերին և այդ հատվածի կրկնության ժամանակ երեխաները շարքով մտնում են դահլիճ՝ քայլերը կատարելով յուրաքանչյուր քառորդին: Քայլում են ծնկներն ուղիղ պահած, կարծես խաղալիքները լարել են, և նրանք շարժվում են: Դահլիճ մտնելուց հետո պտույտ են կատարում և կանգնում կիսաշրջանաձև:

10-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ մարմինը թեքել դեպի աջ
2-րդ զարկ՝ մարմինն ուղղել
3-րդ զարկ՝ մարմինը թեքել դեպի ձախ
4-րդ զարկ՝ մարմինն ուղղել

11-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ոտքը տանել դեպի աջ՝ դնելով կրնկի վրա

2-րդ զարկ՝ աջ ոտքն ուղղել

3-րդ զարկ՝ ձախ ոտքը տանել դեպի ձախ՝ դնելով կրնկի վրա

4-րդ զարկ՝ ձախ ոտքն ուղղել

12-13-րդ տակտեր՝ կրկնել 10-11-րդ տակտերը

14-րդ տակտ՝ յուրաքանչյուր քառորդին ձեռքերը առջևում աստիճանաբար բարձրացնել վեր այնպես, որ 4-րդ զարկին լինեն գլխավերևում

15-16-րդ տակտեր՝ յուրաքանչյուր ութերորդականին պտտվել իրենց առանցքի շուրջն այնպես, որ 16-րդ տակտի 4-րդ զարկին վերադառնան իրենց տեղը և ձեռքերը պահեն կրծքավանդակի դիմաց

17-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ձեռքը տանել դեպի աջ

2-րդ զարկ՝ աջ ձեռքը բերել ձախի մոտ

3-րդ զարկ՝ ձախ ձեռքը տանել դեպի ձախ

4-րդ զարկ՝ ձախ ձեռքը բերել աջի մոտ

18-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ձեռքն առջևում բարձրացնել վեր՝ գլխավերև

2-րդ զարկ՝ աջ ձեռքն իջեցնել ձախի մոտ

3-րդ զարկ՝ ձախ ձեռքն առջևում բարձրացնել վեր՝ գլխավերև

4-րդ զարկ՝ ձախ ձեռքն իջեցնել աջի մոտ

19-20-րդ տակտեր՝ կրկնել 17-18-րդ տակտերը

21-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ երկու ձեռքը փոքր-ինչ «բացել»

2-րդ զարկ՝ երկու ձեռքը լրիվ «բացել»

3-րդ զարկ՝ երկու ձեռքը փոքր-ինչ փակել

4-րդ զարկ՝ երկու ձեռքը բերել միմյանց մոտ

22-րդ տակտ՝ կրկնել 21-րդ տակտը

23-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ձեռքը փոքր-ինչ բարձրացնել, իսկ ձախ ձեռքը փոքր-ինչ իջեցնել (միաժամանակ)

2-րդ զարկ՝ աջ ձեռքը բարձրացնել վեր՝ գլխավերև, իսկ ձախ ձեռքն իջեցնել ստոծանու մոտ (միաժամանակ)

3-րդ զարկ՝ աջ ձեռքը փոքր-ինչ իջեցնել, իսկ ձախ ձեռքը փոքր-ինչ բարձրացնել (միաժամանակ)

4-րդ զարկ՝ ձախ ձեռքը բերել աջի մոտ

24-րդ տակտ՝ կրկնել 23-րդ տակտը

25-րդ տակտ՝ մարմնով կտրուկ ծալվել դեպի ներքև՝ ձեռքերը կախված վիճակում թողնելով (կարծես տիկնիկներին նորից լարել է պետք):

**Մեթոդական ուղղորդումներ**. 25-րդ տակտում «տիկնիկները» խոնարհվում են և միայն ծափահարություններից հետո ուղղվում ու թեթև վազքով դուրս գալիս դահլիճից: Ողջ պարի ընթացքում ծնկները հնարավորինս պահում են ուղիղ: Պարը կարելի է կատարել այլ դասարանի աշակերտների մասնակցությամբ, ովքեր կնվագեն մանկական նվագարաններով:

Այնուհետև աշակերտները սովորում են Գևորգ Արմենյանի «Օրոր»[26] երգը տիկնիկի մասին և դիտում տիկնիկների պարը՝ ռուս կոմպոզիտոր Դմիտրի Շոստակովիչի «Կատակ-վալսը»: Ապա մանկական նվագարաններով՝ եռանկյունի, զանգուլակ, մետաղաֆոն, կատարում են նույն «Կատակ-վալսը»:

«Երաժշտություն և պարարվեստ» ենթաթեման ավարտվում է «Կլոր սեղան» խաղով:

[26] **Օրոր**, Վոկալ-մանկավարժական երկացանկ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից, կազմող՝ Թ. Շահնազարյան, Երևան, Մինիստրության գիտա-մեթոդական կաբինետի հրատարակչական խումբ, 1968:

## ԹԵՄԱ 2. Երաժշտությունը թատրոնում, կինոյում և լրատվամիջոցներում

2-րդ թեման իր մեջ ներառում է «**Երաժշտություն և թատրոն**», «**Երաժշտություն և կինոարվեստ**», «**Երաժշտություն և հեռուստատեսություն**» և «**Երաժշտությունը և համակարգիչը**» ենթաթեմաները:

## ԹԵՄԱ 2.1. Երաժշտություն և թատրոն

**Թատրոնն** արվեստի ամենահին տեսակներից է: Աշխարհը, մեզ շրջապատող իրականությունը, մարդկանց հույզերն ու զգացումները թատրոնը բացահայտում է հանդիսատեսի աչքի առջև դերասանների կատարած գործողություններով՝ դերասանական խաղով: Թատրոնն իր մեջ ներառում է գրականություն, կերպարվեստ, քանդակագործություն, ճարտարապետություն (դեկորացիա), երաժշտություն, պարարվեստ: Թատերական արվեստում միավորվում են դրամատուրգի, ռեժիսորի, նկարչի, կոմպոզիտորի, դերասանի ստեղծագործական ջանքերը: Թատրոնում **գեղարվեստական կերպարը** բացահայտվում է թատրոնին բնորոշ արտահայտչամիջոցներով՝ դերասանի խաղ, մնջախաղ, դիմախաղ, դիմահարդարում, բեմական հագուստ, լուսավորություն, դեկորացիա և այլն:

Հայ և համաշխարհային երաժշտարվեստում իրենց ստեղծագործական գործունեության ընթացքում կոմպոզիտորները հաճախ են երաժշտություն գրել թատերական ներկայացումների համար:

Որպես երգի ուսուցում և նոտագրություն՝ այս ենթաթեմայում սովորողներին ներկայացվում են Կարո Զաքարյանի «Գարուն»[27] և հայկական ժողովրդական և «Հանի՛կ նայ»[28] երգերը:

Համաշխարհային երաժշտության մեջ թատերական ներկայացման համար երաժշտություն գրած կոմպոզիտորներից մեկը գերմանացի կոմպոզիտոր Ֆելիքս Մենդելսոն-Բարտոլդին է: Այդ ստեղծագործությունն է «Ամառային գիշերվա երազը» սիմֆոնիկ սյուիտը, որը նա գրել է անգ-

[27] **Գարուն**, Երգեր մանուկների համար, կազմող՝ Հ. Ստեփանյան, Երևան, «Հայպետհրատ», 1948:

[28] Թումաճան Մ. Թ., **Հայրենի երգ ու բան**, հտ. 1-4, ժողովածու, 1972-2005:

լիացի մեծ թատերագիր Ուիլյամ Շեքսպիրի համանուն կատակերգության հիման վրա՝ որպես թատերական ներկայացման երաժշտություն: Այս կատակերգությունը պատմում է անտառային թագավորի և թագուհու մասին, որոնք օգնում են անտառի բնակիչներին՝ էլֆերին և հեքիաթային այլ հերոսների:

Տարիներ անց Ֆ. Մենդելսոնը մի քանի համար է ավելացնում «Ամառային գիշերվա երազը» սիմֆոնիկ նախերգանքին՝ դարձնելով սյուիտ: Այդ համարներից մեկը «Հարսանեկան քայլերգն» է, որն այժմ հնչում է որպես հարսանեկան արարողության հիմնական երաժշտություն:

Հայ թատերական արվեստը սովորողներին ներկայացվում է Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ նազար» պիեսով, որի երաժշտության հեղինակն է Մարտին Վարդազարյանը: Աշակերտները սովորում են «Նազարի երգը»[29]՝ գրված Արամայիս Սահակյանի խոսքերով: Սովորողներին բացատրվում է նաև Նազարի պատմությունը, որը շատ կարևոր է նրանց՝ հետագայում որպես անհատ ձևավորման և զարգացման գործընթացում:

## ԹԵՄԱ 2.2. Երաժշտություն և կինոարվեստ

Այս ենթաթեմայում սովորողներին ներկայացվում է **կինոարվեստը**՝ որպես արվեստի առավել երիտասարդ տեսակ, հայ կինոարվեստի հիմնադիր, կինոդերասան, ռեժիսոր, բազմաթիվ ֆիլմերի սցենարների հեղինակ Համո Բեկնազարյանը և իր հիմնած «Հայֆիլմ» կինոստուդիան: Հայ կինոարվեստում առաջին կինոերաժշտությունը գրել է աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Աշակերտները ծանոթանում են Ա. Խաչատրյանի կենսագրությանը և ունկնդրում հատվածներ «Զանգեզուր» ֆիլմից:

Դասագրքում ներկայացված է նաև «Հայֆիլմ» կինոստուդիայի մեկ այլ հայտնի կինոնկար՝ «Ճերմակ անուրջներ» ֆիլմը, որի հիմքում Վահան Թոթովենցի «Աղավնիներ» պատմվածքն է: Ֆիլմի երաժշտության հեղինակն է Տիգրան Մանսուրյանը: Որպես ունկնդրում՝ ներկայացված է հատված «Ճերմակ անուրջներ» ֆիլմի երաժշտությունից:

Որպես երգի ուսուցում՝ աշակերտները սովորում են Առնո Բաբաջանյանի «Իմ Երևան»[30] երգը «Առաջին սիրո երգը» կինոնկարից:

[29] **Նազարի երգը**, Անմոռաց երգեր, կազմող՝ Հ. Մինասյան, Երևան, «Գասպրինտ» հրատ., 2011:

[30] **Իմ Երևան**, Երևանյան մեղեդիներ, կազմող՝ Ս. Սարգսյան, Երևան, «Հայաս-

## Թեմա 2.3. Երաժշտությունը լրատվամիջոցներում

Այս ենթաթեմայում ներկայացվում է **հեռուստատեսությունը**՝ որպես արվեստի ամենաերիտասարդ տեսակ և երաժշտության ու հեռուստատեսության կապը:

Երաժշտությունը կարևոր դեր է կատարում հեռուստահաղորդումներում, լրատվամիջոցներում և գովազդներում: Սովորողներին ներկայացվում է «Շանթ» հեռուստաընկերությամբ եղանակի տեսությունը հեռարձակելիս հնչող հայկական ժողովրդական «Հո՜վ արեք»[31] երգի նվագարանային կատարումը: Աշակերտներն ունկնդրում են երգը Կոմիտասի կատարմամբ, իսկ հետո նաև սովորում:

Խոսելով գովազդներում հնչող երաժշտության մասին՝ կարելի է հիշատակել Ավետ Տերտերյանի 3-րդ սիմֆոնիայից հատվածներ, որոնք հաճախ հնչում են ողբերգական և դրամատիկ իրադարձությունների մասին պատմող տեսանյութերում (երկրաշարժ, ջրհեղեղ և այլն):

Հայաստանի առաջին հեռուստաալիքում գովազդային հոլովակների սկիզբը և ավարտն ազդարարվում են հայ մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործություններից հատվածներով: Օրինակ՝ հնչում են հատվածներ Արամ Խաչատրյանի «Գայանե» և «Սպարտակ» բալետներից, Ղազարոս Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննո ստեղծագործությունից և այլն: Ընդ որում, երաժշտությունը հնչում է Հայաստանի ճարտարապետական կոթողների պատկերների ֆոնին: Այդպես, հեռուստադիտողին ներկայացվում են թե՛ ճարտարապետական, թե՛ երաժշտական ազգային կոթողները՝ համապատասխան մակագրություններով: Թեև քիչ, բայց հնչում է նաև հոգևոր մեղեդուց հատված: Օրինակ՝ Հաղպատի վանական համալիրի պատկերն ուղեկցվում է Գրիգոր Նարեկացու (X դար) «Հաւուն, հաւուն» հոգևոր տաղի մի հատվածով: Այսպես գովազդվում են և՛ մեր երկրի տեսարժան վայրերն ու ճարտարապետական հուշարձանները, և՛ հայկական ազգային դասական երաժշտությունը:

Սովորողներին ներկայացնում ենք Արամ Խաչատրյանի ստեղծագործական դիմանկարը և Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետի «Ադաջոն» (Սպարտակի և Ֆրիգիայի զուգապարը), որը հնչում է գովազդներում,

---

տան» հրատ., 1968:

[31] **Հով արեք**, Կոմիտաս, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1, 1960:

նաև «Սառցե դարաշրջան 2» մուլտֆիլմում: Աշակերտներն ունկնդրում և դիտում են մուլտֆիլմի այն հատվածը, որտեղ հնչում է «Սպարտակ» բալետի «Ադաջոն»:

21-րդ դարում յուրաքանչյուրի կյանքում մեծ դեր ունի **համակարգիչը**, քանի որ այն տեղեկատվության ու գիտելիքի հարուստ շտեմարան է: Համակարգիչն իր ուրույն դերն ունի երաժշտության բնագավառում: Համակարգիչը մեզ թույլ է տալիս անմիջապես տեղեկություններ գտնել կոմպոզիտորների ու նրանց ստեղծագործությունների մասին, ունկընդրել այդ ստեղծագործությունները համաշխարհային ճանաչում ունեցող երաժիշտների կատարմամբ: Համակարգչային ծրագրերով կարելի է նոտագրել տարբեր ստեղծագործություններ, սովորել նվագել տարբեր նվագարաններ, նոտագրելուց անմիջապես հետո ունկնդրել այդ ստեղծագործությունները: Համակարգչային ծրագրերով կարելի է նաև ստեղծել տեսանյութեր և տեսասահիկներ, կատարել պրոֆեսիոնալ ձայնագրություններ:

2-րդ կիսամյակն ավարտվում է Արտեմի Այվազյանի «Հայաստան»[32] երգով և «Կլոր սեղան» խաղով:

[32] **Հայաստան**, Անմոռաց երգեր, կազմող՝ Հ. Մինասյան, Երևան, «Գասպրինտ» հրատ., 2011:

# Հավելված

## Աշուն

Խոսք՝ Հ. Հայրապետյանի

Գ. Գեղարիկ












Օրը մռայլ, օրը տխուր,
Բարակ անձրև է մաղում,
Մեգն է պատել սար ու բլուր,
Էլ մարդ չկա դաշտերում:

# Ձոն դպրոցին

Խոսք՝ Հրաչյա Մաթևոսյանի

Ա. Կարապետյան




22
քո ջա – հը վառ Մեր մա – նուկ հո – գու ե – րա –
ենք մեր պա – հում
27
զով Պայ – ծառ, դու լույս ես մեզ տա – լիս,
32
Բա – րու – թյան դաս ես տա – լիս, Նը – վի –
37
րում սեր, մե – ղե – դի, Նը – վի – րում եր – կիր մերդըպ-


43
րոց: Դըպ – րոց դու մեր հա–րա–զատ, Հայ–րե –
f
49
նի ո – գու դուլույսատա–ճար, Դու՝ երգ, իսկ մենք՝ հըն – չյուն, Ուլույ–
57
1.
սիդ ենք միշտ ձըգ – տում: Դըպ
61
2.
Coda
միշտ ձըգ – տում Սըր – տե միշտ ձըգ –




Սրտերում մեր արև, գարուն,
Հավատում ենք լավին, բարուն,
Հայրենի երգն ենք մեր պահում
Մեր մանուկ հոգու երազով
Պայծառ, դու լույս ես մեզ տալիս,
Բարության դաս ես տալիս,
Նվիրում սեր, մեղեդի,
Նվիրում երկիր, մեր դպրո՛ց:

*Կրկներգ*

Միշտ ձգտում,
Ու լույսիդ ենք միշտ ձգտում,
Մեր դպրո՛ց:

# Վարդը

Խոսք՝ Յ. Վ Գյոթեի
Թարգմ. Հովհ. Թումանյանի

Ռ. Մելիքյան




19
Մո – տիկ վա – զեց սի – րուն վար –
22
դին, սի-րունվար – դին, կար-միրվար – դին, Կար-միր
25
վար – դը դաշ-տի մի – ջին: Սի-րունվար – դին, կար-միրվար–
28
դին, Կար-միր վար – դը դաշ–տի մի – ջին:



Տղան ասավ. «Քեզ կպոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին»:
Վարդը ասավ. «Տե՛ս, կծակեմ,
Որ չմոռնաս փշոտ վարդին.
Փշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին»:
2 անգամ

Ու անհամբեր տղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին.
Փուշը նրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քնքուշ վարդին.
Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:
2 անգամ

# Ջան Հայաստան

Խոսք՝ Ա. Սահակյանի

Մ. Մավիսակալյան




14
նի դա-րա-վոր, Սուրբիան-ճար-ներ նա ու - նի փա-ռա-վոր,
17
Ձեռ-քը ճար-տար և ար - դար շի - նա-րար, Յո - գին միշտմա-քուր և պայ -
3
20
ծառ: Ջա՜ն, Հա-յաս - տան, Դու մի
f
23
բուռ լավ սըր - տի նը - ման, - - - -


25
Ջա՛ն, Հա-յաս-տան, Դու հա – յոց նոր ծըն-ված ոս – տան:
29
Այս աշ-խար-հում կա չըք – նաղ Ե – րե-վան,
mf
32
Կա մի Շի-րակ, մի Լո – ռի, մի Սե-վան, Մեզ է նա-յում մի սի –
35
3
րուն Ա – րա-գած՝ Մա – սիս իր յա-րին կա – րո – տած:


38
Ի՞նչ ա–նուն-ներ՝ և Ջեր–մուկ, և Մեղ–րի, ի՞նչ ա–նուն-ներ՝ և Գու–
41
գարք, և Ա–նի, լույս է բաց-վել նոր Գառ–նու սյու–նե-րին, ա–
3
44
րև՝ մեր հա–յոց սա–րե–րին:
Զա՛ն, Հա-յաս–
47
տան, Դու մի բուռ լավ սըր-տի նը – ման: – –
f


Ջա՜ն, Հա-յաս-տան, Դուհա – յոց նործըն-վածոս – տան:
Պա–րա–պա–պա – պա – պա, պա–րա–պա–պա...
պա – պա – պա – պա – պա – պա – պա:


66
ման: – – Զա՜ն, Հա-յաս – տան, Դու հա –
69
յոց նոր ծըն-ված ոս – տան, ոս – տան, ոս –
72
տան, Հա – յա – ստան:
sff
ff
75
ff

# Նոր «Նոր տարի»

Ըստ Երվանդ Պետրոսյանի

Ա. Կարապետյան





16
րի՛, ա-խըր-շու՛տ ա – րի:
Նոր, նոր «Նոր-տա-րի», նոր «Նոր տա-րի»,
20
Նոր, նոր, նոր ձը – մեռ
ու նոր, նոր ձյուն, Ու այդ
22
նոր ձյան մի-ջով Նոր-տար – վա դըռ – ներն են-բաց-վում:
26
Նոր, նոր «Նոր տա-րի», նոր «Նոր տա-րի»,
Նոր, նոր, նոր ձը-մեռ, ու նոր, նոր ձյուն, Ու այդ
30
նոր ձյան մի-ջով Նոր-տար – վա դըռ – ներն են-բաց-վում: Ու թըն-


34
դում է երգ, ծի – ծաղ, Ե–րե–վում է միվառ տո-նա–ծառ, Մի Չյու-նա-
f
38
նուշ ու մի Չը-մեռ պապ՝ Ո-ղող–ված լույ-սե-րով պայ-ծառ: Մի Չյու-նա-
42
նուշ ու մի Չը-մեռ պապ՝ Ո-ղող – ված լույ-սե-րով պայ-ծառ:
46
Նոր, նոր «Նոր տա–րի», նոր, «Նոր տա–րի», Նոր, նոր, նոր ձը–մեռ
49
ու նոր, նոր ձյուն, Ու այդ նոր ձյան մի-ջով Նոր տար – վա դըռ – ներն ենբաց-


վում:
Նոր, նոր «Նորտա-րի», նոր, Նոր «Նոր տա-րի», նոր «Նոր տա – րի»,
Նոր – նոր, նորձը-մեռ ու նոր, նորձյուն, Ուայդ նոր ձյան մի-ջով Նորտար-
վա դըռ – ներն են բաց – վում:
Ու ձը–մեռն է կա-խար-դա-կան, ու հե–քիաթն է ի – րա-կան
նոր «Նորտա – րում, Նոր տա – րի,


71
(աղմուկ,ծիծաղ)
Նոր տա – րի:
74

# Կատակ երգ-պար

Խոսք՝ Ն. Միքայելյանի

Հայկ. ժող. երգ




17
Թե որ մե – կը սը – խալ – վի, Կը – լոր պա – րը կանգ կառ – նի:
21
Ներս ե – կան, ե – կան, Թափ ա – ռան ու թը – ռան,
25
Թև թե – վի բըռ – նե – ցին, Ծափ տը – վին ու թը – ռան:
29
Լավ են պա – րում աղ – ջիկ, տը – ղա՝ Դար – ձան – մի մի գա – րուն,
mf
cresc.
f


Da capo
Ճիշտ են պա – րում, սը – խալ չը – կա Հա – յոց – մեր հին պա – րում:
Coda
ff

# Սևանի լույսերը

Խոսք՝ Ս. Մուրադյանի

Յու. Գաոզյան




14
վա՛ն, կա-պու-տակ, Լույս և հույսկա քոպարզ ջը-րե-րում: Ես քեզ-
1.
18
նով եմ հը-պարտ, Լույսես դու, իմուժն ես ան-պարտ, Դու ե-
3
3
22
րազ, երգ, իմ Սե-վա՛ն, Քո ժը-պիտնէ հաս-նում Ե-րե-վան:
1.


26
ԻՄ ՍԵ-
31
2.
36
Ես քեզ-


40
նով եմ իր – պարտ, Լույսես դու, իմ ուժն ես ան–պարտ, Դու ե –
3
3
44
րազ, երգ, իմ Սե – վա՛ն, Քո ժը – պիտնէ հաս-նում Ե – րե – վան:
48
րազ երգ իմ Սե – վա՛ն, Քո ժը – պիտնէ հաս-նում Ե – րե – վան:


52

# Մայրիկ

Խոսք՝ Ա. Բարսեղյանի

Ա. Գրիգորյան

**Չափավոր, վալսի տեմպով**




24
Քեզ համար եմ ես եր-գում Եր-գը քո
dim.
30
նոր, իմ մայ-րիկ, Քեզ հա-մար եմ ես եր-գում
37
Եր-գը քո նոր, իմ մայ-րիկ:
Լա, լա, լա, լա, լա, լա, լա, լա, լա,


Lento
1.
2.
p

# Օրօր

Խոսք՝ Սարմենի

Գ. Արմենյան

**Չափավոր**



# Գարուն

Խոսք՝ Յ. Հայրապետյանի

Կ. Զաքարյան




12
ու բա-րև:
Կա - նա-չա-զարդ գա-րուն-քին
Տանք համ-բույր-ներ ու բա-րև:
8


17
Լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ լե՛, լե՛:
8


14
իմ ծա – ղի՛կ, Օ – րո՛ր, օ – րո՛ր սի – րու – նի՛կ:
17
Տիկ – նի՛կ ջան, Շու – շի՛կ ջան, Նա – նի՛կ ա – րա ա – նու շիկ,
mf
21
Տիկ – նի՛կ ջան, Շու – շի՛կ – ջան,
pp
23
Նա – նի՛կ ա – րա ա – նու – շիկ: Քեզ նոր շո – րեր
mf
poco animato


26
poco rit.
կը – կա – րեմ,
Ինձ հետ այ – գի
կը – տա – նեմ,
poco rit.
29
a tempo
Ծա – ռե – րի տակ խաղ կա – նենք,
sempre legato
31
rit.
Ծի – տի – կի հետ երգ կա – սենք:
rit.
33
a tempo
Օ – րո՛ր, օ – րո՛ր իմ ծա – ղիկ
Օ – րո՛ր, օ – րո՛ր
a tempo
8


36
սի – րու – նի՛կ, Ծի – տի՛կ ջան, Ծու – շի՛կ ջան,
mf
39
Նա – նի՛կ ա – րա ա – նու – շիկ, Տիկ – նի՛կ ջան,
pp
42
Ծու – շի՛կ ջան, Նա – նի՛կ ա – րա
44
poco rit.
ա – նու – շիկ, ծիկ:
poco rit.

# Նազարի երգը

(«Քաջ Նազար» ներկայացումից)

Խոսք՝ Ա. Սահակյանի

Մ. Վարդազարյան




Աշ-խար-հը հենց ես եմ, ի՞նչ աշ - խարհ, աշ-խար-հը քիչ է ինձ հա - մար,
Բո-լորն ա - ղո-թում են ինձ ար - դեն, կա-րող է աստ-ված եմ, չը-գի - տեմ:
Զա՛ն...

# Իմ Երևան

Խոսք՝ Վ. Հարությունյանի

Ա. Բաբաջանյան

**Սվինգային տեմպում**




14
ջու – րը խը–մել սառ–նո – րակ, Հա – զար ճա–նա-պարհ ես իմ դեմ դու բա–ցել Իմ
Ped.
18
լավ, հա–րա-զա՛տ իմ քա – ղաք:
Քա-րըղ քա-րիդ եմ շա – րել,
22
Քեզ հետ հա–սակ եմ ա – ռել,
Իմ Ե – րե-վա՛ն, Քո ա – մեն շեն–քի հետ Ես իմ


կյանքնեմ կա-պել առ – հա – վետ: Քեզ միշտ սի – րել եմ,
իմ վար – դա – գո՛ւյն ըն – կեր: Քեզ – նով ապ –
րել եմ, քեզ միշտ եր – գել,


36
Դու՝ ան-խա - վար լույ - սի տուն, Ե - րե-վա՛ն, Ա - մեն հա -
3
3
41
յի հույ - սի տուն, Ե - րե - վա՛ն: Դու՝ ան-խա - վար լույ -
3
46
սի տուն, Ե - րե-վա՛ն, Ա - մեն հա - յի հույ -
3
3

5






# Հով արեք

Կոմիտաս




13
Սա – րե – րը հով չե՜ն ա – նում,
p
17
սա – րե – րը հով չե՜ն ա նում,
21
իմ դար – դին դար – ման ա – նում,
mf
dim.


25
իմ դար - դին դար - ման ա - նում:
p
dim.
ppp
29
Ամ - պե՛ր, ամ - պե՛ր, մի քիչ զո՛վ ա - րեք,
mf
sf
p
f
Ped.
33
վա - րար անձ - րև թա - փեք, ծո՛վ ա - րեք.
mf
sf
p
f
Ped.


37
գեշ մար – դու օր – ա – րե վը
mp


41
սև իր ղի տա – կով ա – րեք:
pp
pp
dim.
ppp

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Ամատունի Ս., Երաժշտական գրականություն VII, Երևան, 2008:
2. Անմոռաց երգեր, կազմող՝ Հ. Մինասյան, Երևան, «Գասպրինտ» հրատ., 2011:
3. Ավետիսյան Խ., Լիրիկական երգեր, Երևան, Հայպետհրատ, 1964:
4. Արտուտիկ (մանկական երգեր), կազմող՝ Վ. Վարդանյան, Երևան, «Արևիկ» հրատ., 1988:
5. Բարսամյան Ա., Հարությունյան Մ., Հայ երաժշտության պատմություն, Երևան, «Նոր դպրոց» հրատ., 1996:
6. Բաղդասարյան Մ., Ռուս երաժշտության պատմություն (ուսումնական ձեռնարկ), 2-րդ հրատ., Երևան, «Լուսակն» հրատ., 2022:
7. Բրուտյան Ա., Ռամկական մրմունջներ, Երևան, 1979:
8. Բրուտյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, 4-րդ հրատ., Երևան, 2014:
9. Բրուտյան Ց., Կոմիտաս, Երևան, «Հայաստան» հրատ., 1969:
10. Գալացկայա Վ. Ս., Արտասահմանյան երկրների երաժշտական գրականություն, թարգմ՝ Ռ. Հ. Խաչատրյանի, հտ. I, հտ. III, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2021:
11. Գյոդակյան Գ., Էջեր հայ երաժշտության պատմությունից, Երևան, 2009:
12. Գրիգորյան Ա., Երգեր:– Եր.: «Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ, 2017:
13. Գևորգյան Ա., Երաժշտամանկավարժական տեխնոլոգիաներ (ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, «Արտագերս» հրատ., 2015:
14. Գևորգյան Ա., Ռիթմիկա (մեթոդական ձեռնարկ), մաս I, մաս II, Երևան, «Մեկնարկ» հրատ., 2022:
15. Դեմուրյան Ս., Հայ ժողովրդական երգեր և նվագներ, պրակ 9, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2013:

16. Երգե՛, բլբուլս (հայկական ժողովրդական մանկական երգեր), կազմող-խմբագիր՝ Ա. Փահլևանյան, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2019:
17. Երգեր Հովհաննես Թումանյանի խոսքերով, Երևան, «Հայաստան» հրատ., 1969:
18. Թումաճան Մ., Հայրենի երգ ու բան, հտ. 1-4, ժողովածուներ, 1972-2005:
19. Երգեր մանուկների համար, կազմող՝ Հ. Ստեփանյան, Երևան, «Հայպետհրատ», 1948:
20. Երևանյան մեղեդիներ, կազմող՝ Ս. Սարգսյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1968:
21. Լուսինյան Ա., Այգաբացի ղողանջներ (մանկական երգերի ժողովածու), Երևան, «Լույս» հրատ., 1981:
22. Լուսինյան Ա., Երաժշտություն (ուսումնաօժանդակ ձեռնարկ), Երևան, «Աստղիկ գրատուն» հրատ., 2012:
23. Լևիկ Բ., Արտասահմանյան երկրների երաժշտական գրականություն, թարգմ.՝ Ռ. Հ. Խաչատրյանի, հտ. III, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2021:
24. Կարապետյան Ա., Մանկական խմբերգեր, Երևան, «Պրինտոգրաֆ» հրատ., 2022:
25. Կոմիտաս, Երկերի լիակատար ժողովածու, հհ. 1-14, 1960-2006:
26. Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, երկու գրքով, Գիրք Բ, Երեւան, «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», 2007:
27. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն (ուսումնական ձեռնարկ), կազմող՝ Գ. Մելիքսեթյան, Երևան, հեղ. հրատ., 2022:
28. Հայ կոմպոզիտորների երգեր և ռոմանսներ (վոկալ-մեթոդական ժողովածու), կազմող՝ Ջ. Նազարյան, Երևան, 2006:
29. Հայ կոմպոզիտորների մանկական երգեր, Երևան, ՄԿԱՀ, 2022:
30. Հայկական ռոմանսներ, կազմող՝ Հ. Մելիքյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1984:

31. Հայրենի երգեր. Հայրիկ Մուրադյանի ձայնից վերծանեց, կազմեց և խմբագրեց՝ Ա. Փահլևանյան, 3-րդ հրատ., Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2018:

32. Մանուկյան Մ., Ժողովրդական ավետիսներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1995:

33. Մանուկյան Մ., Մարտունու շրջանի ժողովրդական երգեր, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1997:

34. Մարկոսյան Հ., Եսայան Ռ., Երաժշտության աշխարհում. բալետ, Երևան, «Արևիկ» հրատ., 2007:

35. Ցուզբաշյան Ցու., Ավետիսյան Վ., «Երաժշտություն» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2007:

36. Ցուզբաշյան Ցու., Փահլևանյան Ա., Ավետիսյան Վ., Երաժշտությունը 5-7-րդ դասարաններում (ուսուցչի ձեռնարկ), Երևան, «Զանգակ-97» հրատ., 2011:

37. Ցուզբաշյան Ցու., Փահլևանյան Ա., Երաժշտություն (5-րդ դաս. դասագիրք), Երևան, «Զանգակ» հրատ., 2020:

38. Պետրոսյան Ռ., Խմբերգերի ընտրանի (մանկական), գիրք երկրորդ, Երևան, «Ֆենոմեն» հրատ., 2009:

39. Պետրոսյան Ռ., Խմբերգեր, գիրք 1, Երևան, «Ֆենոմեն», 2009, գիրք 2, Երևան, «Ֆենոմեն» հրատ., 2011, գիրք 3, Երևան, 2012:

40. Պետրոսյան Ռ., Խմբերգեր, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2015:

41. Սարուխանյան Ս., Խաղ, երգ ու պարի աշխարհ, Երևան, «Լույս» հրատ., 1996:

42. Սովետական Հայաստանի երաժշտությունը (հոդվածների ժողովածու), կազմող՝ Ա. Թադևոսյան, Երևան, 1973:

43. Վարդումյան Կ., Իմ մայր Հայաստան (մանկական երգեր), Երևան, հեղ. հրատ., 2009:

44. Վարդումյան Կ., Գունդիրևներ Ն. և Օ., Երգերի, երաժշտական խաղերի ընտրանի, Երևան, հեղ. հրատ., 2021:

45. Վոկալ-մանկավարժական երկացանկ հայ կոմպոզիտորների ստեղ-ծագործություններից, կազմող՝ Թ. Շահնազարյան, Երևան, Մինիստ-րության գիտա-մեթոդական կաբինետի հրատարակչական խումբ, 1968:

46. Կարա-Մուրզա Քր., Խմբերգեր, Երևան, «Հայաստան» հրատ., 1978:

46. **Абдуллин Э.Б.**, **Николаева Е.В.** Теория музыкального образования.– М.: Академия, 2004.

47. **Геворкян А. М.** Формирование слушательской компетенции бакалавров в процессе музыкально-педагогического образования: дисс. канд. пед. наук по ВАК РФ 13.00.02.– Тамбов: 2009.

48. **Жак-Далькроз Э.** Ритм.– М.: Изд. дом «КЛАССИКА-XXI», 2010.

49. **Золотова И.Л.** Детская музыка современных армянских композиторов, Ереван, изд. «Мегапарт», 1991.

50. Программы общеобразовательных учреждений. Музыка 1-8 классы / Под руководством Д.Б. Кабалевского: 4-е издание.– М.: Просвещение, 2007.

51. **Чайковский П. И.** Спящая красавица, балет в трех действиях с прологом. Партитура, соч. 66.

52. **Школяр Л. В.** Музыкальное образование в школе: Учебное пособие для студ. муз. фак. и отд. высш. и сред. пед. учеб. заведений / Под. ред. Л.В. Школяр, В.А. Школяр, Е.Д. Критская и др.– М.: Академия, 2001.

53. Orff, Carl. Ein Bericht in Wort und Bild, 2 Aufl. Mainz, 1960.

55. https://escs.am/am

56. https://itsybitsykidsmusic.com/index.php/portfolio/the-rainbow-song-sheet-music-with-chords-and-lyrics/

57. https://komitasmuseum.am/

58. https://michaelkravchuk.com/free-lead-sheet-merry-christmas/

59. https://www.belcanto.ru/

60. https://www.calend.ru/holidays/